

Լեզվաբանություն

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ն.Հ.ՎԱՐՂԱԿԵՏՅԱՆԻ «ՍՅՈՒՆՅԱՑ ԲԱՐԲԱՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԲԱՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՐԸ

Հոդվածում ներկայացված է Ն.Վարդապետյանի «Սյունյաց բարբառը» անտիպ աշխատանքը, որը գտնվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում: Ն.Վարդապետյանը վերանայում է Գորիսի ենթաբարբառ տերմինը և հայերենի լեզվական այս տարբերակն անվանում է Սյունյաց բարբառ: Այս ուսումնասիրությունն արժեքավոր ներդրում է հայ բարբառագիտության մեջ և վստահելի նյութ կարող է տրամադրել Սյունիքի տարածքի խոսվածքներն ըստ ամենայնի ուսումնասիրելու համար:

Բանալի բառեր` բարբառային իրողություն, քերականություն, ստուգաբանություն, հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն, ենթաբարբառ, հնչյունափոխություն, բարբառային տարբերակ, դարձվածային արտահայտություններ:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում պատահաբար մեր ձեռքն ընկավ թեկնածուական ստվարածավալ մի ատենախոսություն, որի հեղինակի անունը` Ն.Հ.Վարդապետյան, և աշխատանքի վերնագիրը` «Սյունյաց բարբառը»¹, անհայտ էին մեզ: Համացանցում ապարդյուն որոնեցինք Ն.Հ.Վարդապետյանին, լեզվի ինստիտուտի բազմամյա աշխատակիցներից հարցումներ կատարեցինք, սակայն ոչ մի տեղեկություն չկարողացանք ստանալ տվյալ անձի մասին:

Ն.Հ.Վարդապետյանի անունը կարդացինք Ա.Մարգարյանի «Գորիսի բարբառը» գրքի առաջաբանում: Անվանի լեզվաբանը բարբառի ուսումնասիրության պատմությունը և այդ տարածքի խոսվածքներին նվիրված հայտնի աշխատանքները ներկայացնելուց հետո գրում է. «Գորիսի բարբառը հայ բարբառագիտական մտքի տեսադաշտից ըստ էության երկար ժամանակ դուրս է մնացել և երբեք համընդհանուր գիտական ուսումնասիրության նյութ չի դարձել: Եղած մեծ պակասը ծածկելու փորձ է արել հանգուցյալ Ն. Վարդապետյանը «Սյունյաց բարբառ» խորագիրը կրող իր թեկնածուական դիսերտացիայով, որից և միայն մի քանի հատվածներ են հրատարակվել»²: Այս Ա.Մարգարյանը վկայաբերում է Ն.Վարդապետյանի «Ձայնավորների և երկբարբառների հնչյունափոխությունը Գորիսի բարբառում» հոդվածը³ և ատենախոսության

1 Վարդապետյան Ն.Հ., Սյունյաց բարբառը, ՀՍՍՌ ԳԱ, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 1961, 440 էջ (ձեռագիր): Այսուհետև` ՆՎՍԲ:

2 Մարգարյան Ա., Գորիսի բարբառը, ԵՊՀ հրատ., Երևան, 1975, էջ 17:

3 Վարդապետյան Ն., Ձայնավորների և երկբարբառների հնչյունափոխությունը Գորիսի բարբառում, Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու, N 6, մաս 2-րդ, 1960, էջ 129-157:

«Сюникский диалект» ավտոռեֆերատը՝ ռուսերենով¹, որոնք էլ գիտական բարեխղճությամբ նշված են նաև գրքի օգտագործված գրականության ցանկում:

Իր ուսումնասիրության առաջաբանում Ն.Վարդապետյանը գրում է, որ ինքը բնիկ սյունեցի է՝ Քարահունջ գյուղից: Աշխատանքը գրել է Սյունիքի տարածքից իր հավաքած հարուստ նյութի հիման վրա: Որ Ա.Մարգարյանը Ն.Վարդապետյանի աշխատանքում ներկայացված հարուստ բարբառային նյութերն արժևորել ու օգտագործել է, կարելի է ենթադրել գրքի 21-րդ էջում ներկայացված շնորհակալական խոսքից՝ ուղղված Տաթևի, Շինուհայրի, Խնձորեսկի, Խնածախի, Ջորաշենի, Այգեձորի, Հարժիսի՝ իրեն աջակցած մի շարք բարբառախոսների: Ինչպես նկատում ենք, նշված գյուղերի մեջ Քարահունջը չկա: Անհրաժեշտության դեպքում անվանի լեզվաբանը կարող էր դիմել քարահունջեցի բարբառակիրի օգնության, սակայն չի դիմել, քանի որ, ամենայն հավանականությամբ, Ա.Մարգարյանին լիովին բավարարել են Ն. Վարդապետյանի՝ Քարահունջ գյուղի խոսվածքը ներկայացնող բազմաթիվ օրինակները:

Ն. Վարդապետյանի «Սյունյաց բարբառ» 440-էջանոց աշխատանքը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, գրաբար-բարբառ, նաև բարբառի բառապաշարը ներկայացնող բառարաններից և բնագրային օրինակներ պարունակող հավելվածից:

Առաջաբանում հեղինակը կարևորում է հայերենի տարածքային տարբերակների ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ նշելով, որ Սյունիքի տարածքի լեզվական հաղորդակցության միջոցը մինչ այդ ուսումնասիրված չի եղել, Նույնիսկ տարածքային այդ տարբերակին նվիրված որևէ հոդված չի գրվել: Հեղինակը գրում է. «Հայերենի բարբառների մանրամասն ուսումնասիրությունը շատ արժեքավոր նյութ կարող է տալ ընդհանուր լեզվաբանությանը՝ գիտական մի շարք հարցերի լուծման համար»²: Մինչդեռ հայերենի խոսվածքների ու բարբառների մեծ մասը ուսումնասիրված չէ և սահմանազատված չեն բարբառ, ենթաբարբառ, խոսվածք հասկացությունները: Ն. Վարդապետյանը նշում է, որ «Մի քանի տասնյակ բարբառներից մինչև այժմ ուսումնասիրված են քչերը միայն»³: Նա մեկնաբանում է *Սյունիքի բարբառ*, կամ ինչպես նախկինում էր ասվում, *Գորիսի ենթաբարբառ* կամ *Գորիսի խոսվածք* բարբառագիտական ըմբռնումները:

Ինչպես հայտնի է, Գ.Ջահուկյանի՝ հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգմամբ խնդրո առարկա լեզվական տարածքային տարբերակը համարվում է բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի Գորիսի խոսվածք:

Վկայաբերելով Ա.Ղարիբյանի և Ա.Գրիգորյանի տեսակետները, ըստ որոնց Գորիսի բարբառը Ղարաբաղի բարբառի խոսվածքներից է, Ն. Վարդապետյանն առաջադրում է իր տեսակետը: Նա գրում է. «Գորիսի «ենթաբարբառի» մանրազնին հետազոտությունը մեզ բերեց այն համոզման, որ նա ոչ թե Ղարաբաղի խոսվածքն է կամ ենթաբարբառը, այլ որոշակիորեն ձևավորված ու մշակված մի ինքնուրույն բարբառ է, որը շփման որոշ կետեր ունի ինչպես Ղա-

1 **Вардапетян Н.**, Сюникский диалект (автореферат), Ереван, 1962:

2 ՆՎՍԲ, էջ 1:

3 Նույն տեղում:

րաբաղի, Լույնպետ և Արարատյան (Երևանի) բարբառի հետ»¹: Ա. Մարգարյանը ևս Գորիսի բարբառը համարում է հայերենի ինքնուրույն ու ինքնատիպ, իր սեփական հնչյունական համակարգը, բառային հիմնական ֆոնդն ու քերականական կառուցվածքն ունեցող բարբառ: Նա գրում է. «Գորիսի (իմա՝ Սյունիքի) և Ղարաբաղի (իմա՝ Արցախի) բարբառները սերում են մի երբեմնի մի միասնական մայր բարբառից և այլ բան չեն, քան նրա երկու առանձին ճյուղերը, որոնք իրենց պատմական կյանքի զարգացման ընթացքում ձեռք են բերել միմյանցից տարբեր առանձնահատկություններ և ինքնորոշվել իբրև ինքնուրույն ու անկախ բարբառներ»² :

Ն.Վարդապետյանը վերանայում է *Գորիսի ենթաբարբառ* տերմինը և հիմք ընդունելով հայերենի լեզվական այս տարբերակի տարածման սահմանները՝ այն անվանում է *Սյունյաց բարբառ*: Նա գրում է. «Այսպիսով, նկատի ունենալով, որ քննարկվող բարբառը ընդգրկում է պատմական Սյունիքի կենտրոնական հատվածը, որ հիշյալ բարբառը այժմ տարածված է Գորիսի, Սիսիանի և մասամբ Ղափանի շրջաններում, այլև VIII դարի քերական Ստ.Սյունեցու վկայությունն ու անվանումը, մենք ճիշտ ու նպատակահարմար համարեցինք այդ բարբառը կոչել *Սյունյաց բարբառ*»³: Հայտնի է, որ Ստեփանոս Սյունեցին իր թվարկած յոթ բարբառների մեջ Չանգեզուրի տարածաշրջանի լեզվական հաղորդակցության միջոցն անվանում է *գՍիւկիս*: Պետք է ասել, որ բարբառի սահմանման հարցում *Գորիսի* հատկացուցիչից *Սյունյաց* հատկացուցիչին հետաքրքիր սուբյեկտիվ անցում է կատարում Ա.Մարգարյանը: Չնայած ներածությունն սկսում է *Գորիսի բարբառը* բառակապակցությամբ, սակայն ստորև նշում է *Սյունյաց բարբառը*՝ տուրք տալով Ն.Վարդապետյանի *Սյունյաց բարբառ* տերմինին. «Սյունյաց (իմա՝ Գորիսի) բարբառի»⁴:

Ուսումնասիրության առաջին մասը՝ «Հնչյունաբանություն», նվիրված է բարբառի հնչյունափոխական բոլոր իրողություններին: Քննված են հնչյունախոսությունը, ձայնավորների, երկբարբառների, բաղաձայնների փոփոխությունները, ձայնավորների ներդաշնակությունը: Հնչյունական յուրաքանչյուր իրողության համար հեղինակը բերում է բազմաթիվ օրինակներ՝ վկայաբերելով եզակի բացառություններն անգամ:

Ն. Վարդապետյանը կարծում է, որ քմային կամ թեթև ձայնավորների «ծագումը սերտորեն կապված է ձայնեղ բաղաձայնների խլացման, հին հայերենի երկբարբառների պարզեցման և ձայնավորների ներդաշնակության երևույթների հետ»⁵ և վկայաբերում է Աճառյանի օրենքը: Ապա նշում է, որ «Քմային ձայնավորների առաջացումը բխում է բարբառի հնչյունական սիստեմի զարգացման օրինաչափություններից և ոչ մի ազդեցություն չի կրում օտար լեզուների հնչյունական սիստեմներից»⁶:

Ձայնավորների փոփոխությունները ենթավերնագրի ներքո, ամենայն մանրամասնությամբ ներկայացնելով միավանկ, մեկուկես վանկանի և բազմավանկ բառերում ձայնավորների հնչյունափոխությունները՝ առկա բացա-

1 ՆՎՍԲ, էջ II:

2 **Մարգարյան Ա.**, նշված աշխ., էջ 10:

3 ՆՎՍԲ, էջ IV:

4 **Մարգարյան Ա.**, նշված աշխ., էջ 13:

5 ՆՎՍԲ, էջ 1:

6 ՆՎՍԲ, էջ 13:

ռություններով հանդերձ, Ն.Վարդապետյանն առաջ է քաշում մի ուշագրավ դիտարկում: Նա գրում է. «Հետաքրքրության արժանի է բարբառի միավանկ բառերի *է* ձայնավորի համեմատությունը հնդեվրոպական նախալեզվի նույն բառերի հետ: Մեր համեմատությունը ցույց տվեց, որ բարբառիս մի շարք բառեր պահպանել են հնդեվրոպական նախալեզվի *ե*-ն, մինչդեռ գրաբարում այն ավանդվում է հնչյունափոխված ձևով, այսինքն՝ *ի*, ինչպես *գ'են-ծէն-ծիւն*, *penkehēnq-hihēnq*, *mēmso-մէս-միս*, *lendh-լէնդ-լինդ*, *mēd-մէտք-միտք*, *bendh(bh)-պէնդ-պինդ*, *k'erdī-սէրտ-սիրտ*»¹:

Թեկնածուական ատենախոսությունն գրողի համար բավականին համարձակ այս վարկածով նա միանգամից չի հրապուրվում: Գիտակ մարդուն բնորոշ համեստությամբ նա հավելում է, որ լեզվական այս իրողությունը բացատրելու համար անհրաժեշտ է խորը և բազմակողմանի հետազոտություն կատարել մի կողմից՝ գրաբարի և հնդեվրոպական նախալեզվի, մյուս կողմից՝ Սյունյաց բարբառի, գրաբարի, հնդեվրոպական նախալեզվի և նրա ճյուղավորումների հնչյունական ու քերականական համադրության բնագավառում²: Պատահական համարելով այս նմանությունը՝ նա համեմատում է նաև միավանկ բառերի՝ Սյունիքի տարածքին բնորոշ *ու* *օ* հնչյունափոխությունը: «Այստեղ ևս հաստատվեց հնդեվրոպական նախալեզվի *օ* ձայնավորի անփոփոխ մնալը, ինչպես *կ'wōn-շոն-շուն*, *ok'tō- optō-օթ-ութ*, *pōlo-հօլ-ուլ*, *ōsn-օնգը-ունկն*, *omso-օս-ուս*, *ōd-օսիլ-ուտել*, *ko'ro-սօր-սուր*, *dōm-տօն-տուն*, *phōl-փօլ-փուլ*, *swopnu-քօն-քուն*, *g'ōnwi-ծօնգըն-ծունկն*, *smōl-մօլ-մուլ* «ծուխ»: Բացառություն են կազմում *g'ul-կօլ-կուլ*, *g'uro-ծօռ-ծուռ*, *mūs-մօկըն-մուկն*, *psudo-սօտ-սուտ*»³:

Առաջադրված վարկածին վերաբերող նշված օրինակները ներկայացնելուց հետո նա հնչյունական այս հետաքրքրական երևույթի քննությունը հանձնում է ապագա հետազոտողների ուշադրությանը՝ բայց և կատարելով նման եզրահանգում. «Այս երևույթը անշուշտ կյուր է տալիս հետևություն անելու, որ բարբառիս ձայնավորների ծագումը չի կարելի բխեցնել գրաբարից, քանի որ հնդեվրոպական նախալեզվի միավանկ բառերի *ե*, *օ* ձայնավորները բարբառումս մնում են անփոփոխ, իսկ գրաբարում փոփոխվում են»⁴:

Այս բաժնի բազմաթիվ բարբառային օրինակներից ուշադրության արժանի են հատկապես *ու* ձայնավորի հնչյունափոխության բաժնում ներկայացված *Ռուբեն-Ուռուբեն-Ուռումբել* անձնանունը: Կարծում ենք անձնանվան այս տարբերակը կերտվել է *Միքայել*, *Գաբրիել*, *Էմանուել* և նման անձնանունների համաբանությամբ, որոնցում *ել*-ը նշանակում է «աստված»:

Ն. Վարդապետյանի՝ գիտնականի բարեխղճությունը և կատարվող աշխատանքի հանդեպ ունեցած մեծ պատասխանատվությունն ու պրպտելու հմտությունը հաստատելու համար բերենք մեկ օրինակ «Բաղաձայնների փոփոխությունները» ենթաբաժնից: Նա գրում է. «Հետաքրքրության արժանի է գրաբարյան բառավերջի *ւ* հավելվածականի պահպանման երևույթը Սյունյաց բարբառում: Ըստ մեր ոչ լրիվ թվարկման, բարբառում կա վաթսուևից ավելի բառ, որոնցից մոտ քառասունը հարազատորեն պահպանել են *ւ* հավելվածա-

1 ՆՎՍԲ, էջ 23:
2 ՆՎՍԲ, էջ 24:
3 Նույն տեղում:
4 ՆՎՍԲ, էջ 24:

կանը, տասնմեկ բառ կորցրել են այն, իսկ տասներկու բառ ունեն վերջահանգ *և*, որը գրաբարում տպագիր ձևով չի ավանդվում: Թվենք այդ բոլոր բառերը»¹:

Բարբառի հնչյունափոխական իրողությունները ներկայացնելու ընթացքում հեղինակը կատարում է ուշագրավ ստուգաբանություններ:

Անդրադառնալով բաղաձայնների անկման երևույթին՝ հեղինակը ներկայացնում է մի շարք անձնանունների հնչյունափոխված ձևերը, ապա կատարում է ուշադրության արժանի մի բացատրություն: «Այս վերջին հնչյունափոխությամբ պետք է բացատրել Գորիս աշխարհագրական անվան ծագումը, որը մինչև այժմ չի մեկնաբանվել: Մեր կարծիքով, այս անունը ծագել է *Գրիգորիս* անձնանունից՝ բառասկզբի «Գրի» հնչյունախմբի անկումով: Բարբառում այս անունը հնչում է *Կորես* ձևով, որի հնչյունափոխությունը լրիվ համապատասխանում է բարբառում գործող ձայնեղ բաղաձայնների խլացման և սրա հետ կապված ձայնավորների քմայնացման օրինաչափություններին»²: Ապա ասելիքը մեկնաբանում է մի շարք օրինակների հնչյունափոխությամբ: «Այսպիսով, Գորիս աշխարհագրական անունը ծագում է Գրիգորիս անձնանունից, որը Սյունյաց երկրի եպիսկոպոսության հիմնադիրն է եղել»:

Պետք է ասել, որ Ա. Մարգարյանը համակարծիք չէ այս հարցում և առաջադրում է ստուգաբանության իր տարբերակը: Նա *Գորիս* տեղանվան հիմքը համարում է *Գորայք*-ը, որի *Գորայս* հայցականի ձևը դարձել է Գորիս, բարբառային տարբերակով՝ Կյորես³:

Գորիս տեղանունը ստուգաբանելուց հետո հեղինակը խոսում է նաև հարազատ գյուղի *Քարահունջ* տեղանվան մասին և բարբառի հնչյունական օրենքներով բացատրում հետևյալը. «Քարահունջ տեղանվան ծագումը կապված է քար և գրաբարյան ունջ (տակ, հատակ) բառերի հետ: Սկզբից ստանալով *Քարաունջ* «քարատակ, քարահատակ, քարաբերդ» ձևը, որը լրիվ կերպով համապատասխանում է նաև նրա աշխարհագրական դիրքին, հետագայում այս բառի բառամիջի երկու ձայնավորների միջև ավելացել է *հ* հազագը՝ *Քարահունջ*»⁴: Ի դեպ, աշխատանքում կան բազմաթիվ տեղանունների բարբառային ձևեր, որոնք կարող են օգտակար լինել տեղանունների ստուգաբանությամբ զբաղվողներին:

Աշխատանքի երկրորդ՝ «Ձևաբանություն» մասում ներկայացնում է բարբառի ձևաբանությունը, քննում բոլոր խոսքի մասերը, հոդը, դրանց բարբառային առանձնահատկությունները:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում աշխատանքի երրորդ՝ «Բառագիտություն» մասը, որում քննվում են բարբառի բառապաշարի շերտերը և բառերի իմաստափոխության ձևերը: Օրինակ՝ լրիվ իմաստափոխություն (պարանել- պըրանիլ), իմաստի լայնացում նոր երանգներով կամ բազմիմաստություն (հայ, մարդ -«ամուսին»), իմաստի նեղացում (ապուր «անասնակեր») և իմաստի շրջում (կապել -ջուրը կապել «ջուրը արձակել»)»⁵:

Ն.Վարդապետյանի ատենախոսության հավելվածում ներկայացված է գրաբարից-Սյունյաց բարբառ բառացանկ՝ մոտ 1850 բառով: Աշխատանքին

1 ՆՎՍԲ, էջ 71:

2 ՆՎՍԲ, էջ 76-77:

3 **Մարգարյան Ա.**, Գորիսի բարբառը, էջ 3-4:

4 ՆՎՍԲ, էջ 78-79:

5 ՆՎՍԲ, էջ 257-260:

կից բարբառային բառարանն ընդգրկում է մոտ 5000 բառ և դարձվածային միավոր¹:

Բնագրային օրինակները ներկայացնում են ժողովրդական երգեր, Հ. Թումանյանի «Անբան Հուռին» հեքիաթը և «Վեսկի Մարգարի պատմությունը»: Վերջինս բերել է Սերո Խանգադյանի «Մխիթար Սպարապետ» գրքից² բարբառային տառադարձմամբ:

Հավելվածում կան հետաքրքիր բառեր և դարձվածքներ, որոնք ներկայումս գործածական չեն, սակայն պահպանվել են Ն.Վարդապետյանի աշխատանքի շնորհիվ: Նման օրինակներից են՝ «խուփսուր- խուփը սրելու քար, որով ոչ թե խուփն են սրում, այլ կատակի համար դնում են առաջին անգամ գուլթան եկածի շալակը»³: «Տեղըտ ծօխ ա, տէն նըստի- հանդիմանություն, նկատողություն, քեզ հուվա ասում թա՛ւ տեղըտ ծօխ ա, տէն նըստի»: «Հա՛սի- մեծարարական (կոչական) բառ՝ ուղղված հարգալից կանանց, Ա՛գու՛լ հա՛սի, Բօխճա հա՛սի»⁴: Բառի բացատրությունը գաղափար է տալիս ժամանակին բնորոշ անձնանվանական համակարգի մասին: Բազմաթիվ օրինակներ ունեն նաև ազգագրական արժեք:

Մեր ուշադրությունը գրավեց նաև *հավուր* բառի բացատրությունը. «Ժամանակ, պահ, մըն հավուր տեղըտ նըստի, հեսա կա՛ էմ»⁵, այսինքն՝ «մի պահ տեղդ նստիր, հիմա կգամ», որի հիմքում, կարծում ենք, գրաբայան *յաւուր պատշաճի* արտահայտությունն է:

«Ծերք» բազմիմաստ բառի բացատրության մեջ մեր ուշադրությունը գրավեց «մեկ խաղակես» իմաստը՝ «յեկ մըն ծերք խաղ անենք» (332): Բարբառներում հիմնականում հայտնի են *մի օյին*, *մի թայլա* օտարաբանությունները:

Ժողովրդախոսկցական հայերենում և բարբառներում լայնորեն տարածված *ջրի ճամփա* դարձվածքը բառարանում հանդիպում է *ճըղացի ճընհապա* հետաքրքիր ձևով. «Մեր տօնը քեզ հետի ճըղացի ճընհապա յա տա՛ռա՛լ» (էջ 356):

«Մըթկին դօնը ինգնիլ -մտքի խորքն ընկնել, երկար մտածել»: Մասնագետներին մտածելու տեղիք է տվել *դօն* բառը, որի մասին եղած կարծիքները համադրելով՝ իր ստուգաբանությունն է առաջադրում Լ.Հովհաննիսյանը⁶:

Այսպիսով, Ն.Վարդապետյանի «Սյունյաց բարբառը» աշխատանքը արժեքավոր ներդրում է հայ բարբառագիտության մեջ և վստահելի նյութ կարող է տրամադրել Սյունիքի տարածքի խոսվածքներն ըստ ամենայնի ուսումնասիրելու համար: Նման ատենախոսության տպագրությունը ևս մեկ արժեքավոր ուսումնասիրությամբ կհամալրի բարբառագիտական գրականության ներկայիս շարքը:

1 ՆՎՍԲ, էջ 261:

2 ՆՎՍԲ, էջ 208-211:

3 ՆՎՍԲ, էջ 330:

4 ՆՎՍԲ, էջ 348:

5 Նույն տեղում:

6 Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Բարբառային մի քանի բառերի քննություն, «Պատմա-բանասիրական հանդես», 1999, N 2-3, էջ 283: Նյութին անդրադարձել է Շ.Մինասյան, Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությունը «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում, ԱրՊՀ Գիտական ընթերցումներ, Ստեփանակերտ, 2018, էջ 34:

ДИАЛЕКТИЧЕСКАЯ ЦЕННОСТЬ РАБОТЫ Н.ВАРДАПЕТЯНА «СЮНИКСКИЙ ДИЕЛЕКТ» - АЙКАНУШ МЕСРОПЯН - В статье рассматривается неопубликованная работа Н. Вардапетяна «Сюниксий диалект», которая находится в библиотеке Института языка им. Г. Ачаряна НАН РА. Н. Вардапетян пересматривает термин горисский говор, и этот лингвистический вариант армянского языка называет сюникским диалектом. Это исследование является ценным вкладом в армянскую диалектологию и может предоставить надежный материал для изучения диалектов Сюникской области.

Ключевые слова: диалектное явление, грамматика, фонетика, лексикология, морфология, синтаксис, поддиалект, чередование звуков, диалектный аналог, фразеологизмы.

THE DIALECTICAL VALUE OF STUDY OF THE «DIALECT OF SYUNIK» BY N.VARDAPETYAN - HAYKANUSH MESROPYAN - The article discusses the unpublished work «Dialect of Syunik» by N. Vardapetyan, which is located in the library of the Institute of the language of them. G. Acharyan NAS RA. N. Vardapetyan revises the term Goris dialect, and this linguistic variant of the Armenian language is called the Syunik dialect. This study is a valuable contribution to the Armenian dialectology and can provide reliable material for studying dialects of Syunik region.

Key words: dialectal phenomena, grammatica, etymology, phonetics, lexicology, morphology, syntax, subdialect, sound interchange, dialectal analogue, phraseologism.